Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010թվականի
նոյեմբերի 11-ի N 1437 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՋԵՐՄՈՒԿ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԷ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Անվանումը	Մոդելը	Չափի միավորը	Քանակը	Ծագման երկիրը	Արտահանման երկիրը	Արժեքը (դրամ)	Ներմուծման ժամկետը	
									տարին	եռամսյակը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	8421	Ջրի մաքրման սարքավորում, այդ թվում՝								
1.1		Չմշակված ջրի քլորացման համակարգ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	2410801	2010 2011	4 1
1.2		Չմշակված ջրի տարողության աքսեսուարներ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	5030603	2010 2011	4 1
1.3		Չմշակված ջրի պոմպ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	2367056	2010 2011	4 1
1.4		Ուլտրաֆիլտրման ցանց	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	437444	2010 2011	4 1
1.5		Ուլտրաֆիլտրման համակարգ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	25882086	2010 2011	4 1
1.6		Ուլտրաֆիլտրման և հակառակ լվացման տարողություն	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	3640504	2010 2011	4 1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.7		Ուլտրաֆիլտրման հակառակ լվացման պոմպ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	2765616	2010 2011	4 1
1.8		ՌՕ մուտքի պոմպ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	2780198	2010 2011	4 1
1.9		Ուլտրաֆիլտրման մաքրման կայան	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	3475247	2010 2011	4 1
1.10		Աձխե ֆիլտր	-	հատ	2	Գերմանիա	Գերմանիա	48390993	2010 2011	4 1
1.11		Ֆիլտր 5 μm	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	1866426	2010 2011	4 1
1.12		Ուլտրամանուշակագույն համակարգ մինչև ՌՕ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	6999099	2010 2011	4 1
1.13		Անտիսկալանտի դոզավորման կայան	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	938074	2010 2011	4 1
1.14		Բիսորլֆիտի դոզավորման կայան	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	1001260	2010 2011	4 1
1.15		Ռեվերս Օսմոս	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	37450042	2010 2011	4 1
1.16		Արտադրական ջրի տարողություն	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	11985958	2010 2011	4 1
1.17		Արտադրական ջրի պոմպակայան	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	2969757	2010 2011	4 1
1.18		Ուլտրամանուշակագույն ստերիլիզացնող սարք	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	5035463	2010 2011	4 1
1.19		Հսկիչ սարքեր	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	15636182	2010 2011	4 1
1.20		Ջրերի մշակման կայանի համար նախատեսված միացման խողովակներ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	10411160	2010 2011	4 1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.21		Ջրերի մշակման կայանի համար նախատեսված միացման կաբելներ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	4481368	2010 2011	4 1
1.22		Ջրերի մշակման կայանի պահեստային մասեր և քիմիկատներ	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	8024662	2010 2011	4 1
2	8422	Պլաստիկ շշերով շշալցման սարքավորում, այդ թվում՝								
2.1		Շիշ փչող մեքենա	Blomax 6	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	336191000	2010 2011	4 1
2.2		Բարձր ճնշման օդի կոմպրեսոր	CE 46 B	հատ	1	Բելգիա	Գերմանիա	81310000	2010 2011	4 1
2.3		Դատարկ շշերի օդի կոնվեյորներ	Air conveyor	հատ	1	Իտալիա	Գերմանիա	32618000	2010 2011	4 1
2.4		Դատարկ շշերը ցայող մեքենա	EM 45_40	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	65377000	2010 2011	4 1
2.5		Շշալցնող և խցանավորող մեքենա	DRV 72_12	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	243413000	2010 2011	4 1
2.6		Պնևմատիկ խցաններ մատակարարող մեքենա	Cap Feeder	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	8648000	2010 2011	4 1
2.7		Ըմպելիքի խառնման մեքենա	Paramix C 21	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	6392000	2010 2011	4 1
2.8		Լցման բարձրությունն ստուգող սարք	P 2000 FHK	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	76234000	2010 2011	4 1
2.9		Մինչև պիտակավորող մեքենան փչող սարք	TF 02	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	9588000	2010 2011	4 1
2.10		Պիտակավորող մեքենա	360_145 GT	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	108382000	2010 2011	4 1
2.11		Կոդավորող մեքենա	FBI 10	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	7191000	2010 2011	4 1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2.12		Կոնվեյորներ շշերի համար	BTR	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	54332000	2010 2011	4 1
2.13		Շղթաների լուբրիկացիոն համակարգ	Time driven	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	8178000	2010 2011	4 1
2.14		Փաթեթավորող մեքենա	SP 035	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	86292000	2010 2011	4 1
2.15		Արկղերի կոնվեյորներ	GTR	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	8789000	2010 2011	4 1
2.16		Պալետների փաթեթավորող մեքենա	107 FRD	հատ	1	Իտալիա	Գերմանիա	2491000	2010 2011	4 1
2.17		Հիմնական բաշխիչ	EL-HV	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	4935000	2010 2011	4 1
2.18		Մալուխ/ էլեկտրական սարքավորումներ	Cables	հավաքածու	1	Գերմանիա	Գերմանիա	14523000	2010 2011	4 1
2.19		Սանիտարական մշակման համակարգ	3 - 4.000	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	74119000	2010 2011	4 1
2.20		խողովակներ	Piping Material	հավաքածու	1	Գերմանիա	Գերմանիա	28059000	2010 2011	4 1
2.21		Պլատֆորմ	Platforms	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	3290000	2010 2011	4 1
2.22		Շաքարի լուծման համակարգ	624-304/303	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	30080000	2010 2011	4 1
2.23		Շաքարի ֆիլտրման և սառեցման համակարգ	624-306	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	36237000	2010 2011	4 1
2.24		Սպիտակ օշարակի պահման տարողություն, աքսեսուարներ	722-612	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	14382000	2010 2011	4 1
2.25		Խտանյութի կայան	722-611	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	12361000	2010 2011	4 1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2.26		Վերջնական օշարակի պահման տարողություն, աքսեսուարներ	722-613	հատ	4	Գերմանիա	Գերմանիա	157356000	2010 2011	4 1
2.27		Գործընթացի վերահսկման համակարգ	S1	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	20445000	2010 2011	4 1
3	8422	Ապակե շերով շալցման սարքավորում, այդ թվում՝								
3.1		Անփակեր (շերն արկղերից կոնվեյորի վրա տեղափոխող մեքենա)	SP-A 1-1-1400	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	50290000	2010 2011	4 1
3.2		Փակեր (շերը կոնվեյորից արկղերի մեջ տեղափոխող մեքենա)	SP-E 1-1-1401	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	53580000	2010 2011	4 1
3.3		Արկղերի լվացման մեքենա	KW 1-2	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	14570000	2010 2011	4 1
3.4		շերի լվացման մեքենա	SEC 19/87 31	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	253800000	2010 2011	4 1
3.5		կաուստիկ սոդայի լուծման տարողություն	Hormes 3000	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	8742000	2010 2011	4 1
3.6		Դատարկ շերի ստուգման մեքենա	David	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	32900000	2010 2011	4 1
3.7		Դատարկ շերի ցայման մեքենա	EM 40_36	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	79900000	2010 2011	4 1
3.8		Շշալցնող և խցանավորող մեքենա	DMG 50_10	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	202100000	2010 2011	4 1
3.9		Խցաններ մատակարարող մեքենա	Corkmaster	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	11045000	2010 2011	4 1
3.10		Ըմպելիքի խառնման մեքենա	CMX 4	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	66740000	2010 2011	4 1
3.11		Օդային վարագույր	Air curtains	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	4465000	2010 2011	4 1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
3.12		Կոնվեյորներ շշերի համար	BTR	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	96585000	2010 2011	4 1
3.13		Արկղերի կոնվեյորներ	GTR	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	52640000	2010 2011	4 1
3.14		Հիմնական բաշխիչ	EL-HV	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	6110000	2010 2011	4 1
3.15		Մալուխ/ էլեկտրական սարքավորումներ	Cable material	հավաքածու	1	Գերմանիա	Գերմանիա	22560000	2010 2011	4 1
3.16		Խողովակներ	Piping materials	հավաքածու	1	Գերմանիա	Գերմանիա	11750000	2010 2011	4 1
3.17		Կոդավորող մեքենա	FBI 10	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	7191000	2010 2011	4 1
3.18		Շղթաների լուբրիկացիոն համակարգ	Wet Lubrication	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	4935000	2010 2011	4 1
4	Օժանդակ սարքավորումներ									
5	8716 31 000	CO2 տեղափոխման կցորդ-ցիստեռն	-	հատ	1	Թուրքիա	Թուրքիա	28905000	2010 2011	4 1
6	7311 00 990	CO2 պահման տարողություն	-	հատ	1	Թուրքիա	Թուրքիա	20210000	2010 2011	4 1
7	2402 90 000	560 կգ/ժ հզորությամբ գոլորշիացուցիչ	-	հատ	1	Թուրքիա	Թուրքիա	1339500	2010 2011	4 1
8	8481 10 190	Ճնշման իջեցման փական	-	հատ	1	Թուրքիա	Թուրքիա	305500	2010 2011	4 1
9	8403 10 900	600.000 Կկալ/ժ հզորությամբ տաք ջրի բոյլեր	-	հատ	1	Թուրքիա	Թուրքիա	9071000	2010 2011	4 1
10	8403 10 900	3.000 կգ/ժ հզորությամբ գոլորշու բոյլեր	-	հատ	1	Թուրքիա	Թուրքիա	22325000	2010 2011	4 1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
11	8422 30 000	CO2 լցման սարքավորում	-	հատ	1	Գերմանիա	Թուրքիա	4817500	2010 2011	4 1
12	8413 50 200	CO2 բարձր ճնշման պոմպակայան	-	հատ	1	Գերմանիա	Թուրքիա	1938750	2010 2011	4 1
13	8403 10 900	3.000 կգ/ժ հզորությամբ գոլորշու բոյլեր	-	հատ	1	Թուրքիա	Թուրքիա	25145000	2010 2011	4 1
14	Ընդամենը							2829153249		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1437

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010թվականի
նոյեմբերի 11-ի N 1437 -Ա որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

«ՋԵՐՄՈՒԿ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԷ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան «_____ե..... 2010թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս Ներսես Երիցյանի, մի կողմից, և «Ջերմուկ ինթերնեյշնլե սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերությունը, ի դեմս Նարինե Բաղանյանի (այսուհետ՝ ընկերություն), մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1437 -Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով ընկերությունը պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասինե N 600-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտրված ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավորվում

է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը ծրագրի իրականացման գործընթացում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. կատարելու ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.

2.2.2. պահանջելու ընկերությունից ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները:

2.3. Ընկերությունը պարտավոր է՝

2.3.1. մինչև 2011 թվականի հունիսի 1-ը ավարտել ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված ներդրումային ծրագրում նշված՝ զովացուցիչ ըմպելիքների և բնական հյութերի արտադրության կազմակերպումը.

2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետով նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 120 նոր աշխատատեղ՝ ապահովելով վերջինների մոտ 120 հազ. դրամ միջին աշխատավարձով.

2.3.3. հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարներն ավելացնել աշխատողների թվաքանակի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ:

2.4. Ընկերությունն իրավունք ունի՝

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. ծրագրի իրականացմանը ներգրավելու այլ կազմակերպությունների և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը:

3. Հաշվետվություն և մոնիթորինգ

3.1. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.2. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել ծրագրի շրջանակներում մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.3. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.5. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.6. Ընկերությունը նախարարությանը ներկայացնում է եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ընկերությունը պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու դեպքում, նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու ընկերությունից վճարելու հետաձգված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1437 -Ա որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ընկերության կողմից ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ «Ավելացված արժեքի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը։

5.2. Ծրագիրը համարվում է կատարված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում։

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղ-

թահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով՝ 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ